ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

ԼՐԱՏՈՒ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

No. 7 հունիս 2013

Մոդել ԵԱՀԿ համաժողով

Մայիսի 2-3-ին գրասենյակը անցկացրեց **մոդել ԵԱՀԿ** համաժողով Երևանում՝ Երիտասարդ առաջնորդների դպրոցի համագործակցությամբ: Համաժողովի ընթացքում 18-30 տարեկան մոտ 60 երիտասարդներ քննարկեցին միգրացիան և տնտեսական կայունությունը: ԵԱՀԿ մոդել համաժողովը կրկնօրինակում է **ԵԱՀԿ հիմնական որոշում կայացնող մարմնի՝** Մշտական խորհրդի նիստը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Անվտանգության նկատմամբ ավանդական հայեցակարգը ներկայումս վերասահմանվում է՝ ներառելով ոչ միայն պետությունների անվտանգությունը, այլ նաև դրանց բնակիչների ապահովությունը և բարեկեցությունը:

Սրա հիմքում ընկած է անվտանգության անբաժանելիության գաղափարը, որը ամրագրված է ԵԱՀԿ հիմնարար սկզբունքներում: Անվտանգության ոլորտի բարեփոխումը քաղաքական ու տեխնիկական մարտահրավեր է, որը պահանջում է պետական և ոչ պետական դերակատարների լայն շրջանակի մասնակցություն՝ ավանդական ինստիտուցիոնալ սահմաններում միասին աշխատելու համար:

Անվտանգության ոլորտի բարեփոխման հայեցակարգը և զարգացումը առաջին անգամ ներկայացվեց Հայաստանի տարբեր պետական կառույցների 30 մասնակիցներին քառօրյա դասընթացի ժամանակ, որը հունիսի 11-14-ը կազմակերպել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության, Ավստրիայի պաշտպանության և սպորտի նախարարության և Ժնևի զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության (ԶՈՒԺՎ) կենտրոնի հետ համատեղ:

ԶՈՒԺՎ-ի միջազգային անվտանգության ոլորտի խորհրդատվական խմբի չորս փորձագետների կողմից անցկացված դասընթացի ուշադրության կենտրոնում անվտանգության ոլորտի բարեփոխման քաղաքական բնույթն էր, դրանից բխող մարտահրավերները, դրա առնչությունը գենդերային հարցերին և կառավարման համակարգին: Դասընթացի ժամանակ քննարկվել է նաև անվտանգության ոլորտի գործունեության մեջ պետական և ոչ պետական մասնակիցների դերերը և դրանց ընդգրկման առանձնահատկությունները:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԵԱՀԿ շարունակեց ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում երկու ընտրական փուլերին» ծրագրի իրականացումը, հատուկ ուշադրություն դարձնելով նախագահական և Երևանի ավագանու ընտրությունների նախապատրաստական աշխատանքներին: Փետրվարին անցկացվող նախագահական ընտրություններին ընդառաջ վերապատրաստվել են մոտ 14,000 ընտրական պաշտոնյաներ, ինչը, ըստ դիտորդների, հանգեցրել է ընտրական հանձնաժողովների կողմից ցուցաբերած ավելի արդյունավետ աշխատանքի: Միևնույն ժամանակ ծրագիրը մեծացրեց ընտրական գործընթացի վերահսկողությունը քաղաքացիական հասարակության կողմից՝ աջակցելով դիտորդական հինգ տեղական խմբերի, որոնց դիտորդները տեղակայված էին ողջ երկրի տարածքում և ապահովում էին անաչառ դիտարկում ընտրական օրվա զարգացումների մասին: Սա աննախադեպ իրադարձություն էր. տասը ՀԿ-ներ համատեղ հայտարարությամբ հրապարակեցին իրենց եզրակացությունները և ներկայացրեցին իրենց առաջարկությունները գործընթացը բարելավելու համար: Հետամուտ լինելով Հայաստանի նախորդ ընտրությունների առնչությամբ ներկայացված կարևորագույն առաջարկություններից մեկին, գրասենյակը հատուկ ուշադրություն դարձրեց ընտրությունների հետ կապված հանցագործությունների արդյունավետ հետաքննությանը և դատական հետապնդմանը՝ կազմակերպելով աշխատաժողով Հայաստանի դատախազների և քննիչների համար:

Այս ծրագիրը հովանավորում էր նաև քարոզարշավի ընթացքում հեռարձակող լրատվամիջոցների համապարփակ մշտադիտարկումը և շարունակում էր աջակցություն տրամադրել Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակներին և արագ արձագանքման խմբերին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ/ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի տնտեսության դիվերսիֆիկացիա

Մայիսի 16-18-ին Սյունիք կատարած իր այցի ժամանակ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը հյուրընկալության հմտությունների բարձրացման դասընթացների ավարտական վկայականներ հանձնեց Գորիսի, Կապանի, Սիսիանի և Մեղրիի մասնակիցներին: Հանքարդյունաբերության ոլորտի արագ աճը ստեղծել է տնտեսության դիվերսիֆիկացիայի անհրաժեշտություն՝ տնտեսական անվտանգության ռիսկերը մեղմելու համար: Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացումը, անշուշտ, կօգնի աշխատատեղերի ստեղծմանը և եկամուտների ստացմանը արդյունաբերության այլընտրանքային ոլորտներում: Հյուրընկալության հմտությունների բարձրացման դասընթացին, որ կազմակերպել էին ԱՄՆ ՄԶԳ գրասենյակի աջակցությամբ, մասնակցել են 140 մասնակից՝ հյուրանոցներից, ռեստորաններից և հյուրատներից, ինչպես նաև զբոսավարներ՝ Սյունիքի ութ քաղաքային և գյուղական համայնքերից:

2014թ.-ին Կապանում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակը պլանավորում է կազմակերպել դոնորների և ներդրողների համաժողով՝ ոչ հանքարդյունաբերական ոլորտում ներդրումներ խթանելու նպատակով, ինչպես նաև երիտասարդների համար կարիերայի կենտրոն ստեղծելու, Սյունիքի մարզպետարանի համար էկոնոմետրիկ մոդելավորման/ծախսարդյունավետության վերլուծության օժանդակություն ցուցաբերելու, թափուկավայրերում կանաչ գոտիներ ստեղծելու և հանքարդյունաբերության ոլորտում արհմիություններին աջակցելու համար:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը մերժեց «Մեգո Գոլդ» ընկերության կողմից Մելիք գյուղի (Արագածոտնի մարզ) մոտ Թուխմանուկի նոր (3-րդ) պոչամբարի կառուցման ծրագիրը: Տեղի համայնքը մտահոգություններ էր հայտնել առկա առողջապահական և բնապահպանական բացասական ազդեցությունների խորացման հնարավորությունների առնչությամբ, որոնք սկսվել էին 2006թ.-ին ընկերության կողմից ոսկու հանքի շահագործմամբ: Համայնքի խնդրանքով Ապարանի Օրհուս կենտրոնը՝ քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների հետ միասին, կատարեցին իրազեկության բարձրացման բազմաթիվ աշխատանքներ և կազմակերպեցին հանրային քննարկումներ՝ ընդգրկելով բոլոր շահագրգիռ կողմերին: Կենտրոնը հրատարակեց և կառավարությանը ներկայացրեց հոդվածներ, որոնցում շեշտադրվում էին բնապահպանական մտահոգությունները և փորձագետների վերլուծությունները: ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված հանրային լսումների ժամանակ քննարկվեցին հանքարդյունաբերության ազդեցությունը առողջության և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև սեյսմիկ ռիսկերը: Նախարարության կողմից ձեռնարկված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը ապացուցեց, որ պոչամբարի կառուցման դիմումը պետք է մերժել: Ապարանի Օրհուս կենտրոնը շարունակում է նպաստել Մելիք գյուղի համայնքի անվտանգությանը՝ փորձագիտական տվյալներ և իրավաբանական օգնություն տրամադրելու միջոցով, որպեսզի բարելավի շրջակա միջավայրը և տեղի բնակչության առողջության անվտանգությունը:

Ապարանի Օրհուս կենտրոնը օգնեց լուծել բնապահպանական խնդիրները Մելիք գյուղում

Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն

Կտրո՛ենք միասին

Կարգավորիչ գիլյոտին (կարգավորման արագ պարզեցում) ծրագիր

Մայիսի 13-ին տեղի ունեցավ ՀՀ նախահագի կողմից նշանակված և ՀՀ վարչապետի գլխավորությամբ գործող Բարեփոխումների խորհրդի՝ «Կարգավորիչ գիլյոտին» ծրագրի համար պատասխանատու գերագույն մարմնի նիստը: Կատարված աշխատանքների մասին զեկուցեց Բարեփոխումների կենտրոնի տնօրենը: Լիարժեք կատարվել են բարեփոխման գործընթացի միջազգային փորձագետ Սքոթ Յակոբսի բոլոր առաջարկությունները, բարեփոխում իրականացնողների համար առկա են գործիքները, ներառյալ էլ-կարգավորիչ գիլյոտինի համակարգչային ծրագիրը, որը կարևոր առցանց պորտալ է բարեփոխումը համակարգելու և կառավարելու համար: Հիմնվելով նոր տեղեկատվության վրա, Բարեփոխումների կենտրոնը որդեգրեց աշխատանքային պլան՝ մինչև 2013թ.-ի ավարտը և հստակեցրեց կարգավորման ենթակա հաջորդ ոլորտները: Քննարկվեց նաև Կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ) մոտեցման որդեգրումը, որը կարևոր է բարեփոխման ընթացքում կայունության հասնելու համար: Համատեղ երկխոսության ֆորումում, որը կազմակերպվել էր հունիսի 13-ին, քննարկվեց Բարեփոխման խորհրդի առաջընթացի մասին հաշվետվությունը, և գրասենյակը ստացավ ՀՀ նախագահի գլխավոր խորհրդականի պաշտոնական դիմումը՝ հաջորդ փուլի և ԿԱԳ-ի որդեգրման համար ֆինանսների հայթհայթման աշխատանքներ նախաձեռնելու հարցով:

Առցանց ԶԼՄ-ների էթիկա

Հունիսի 8-9-ին ԵԱՀԿ-ի և «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի կողմից համատեղ կազմակերպված սեմինարի ժամանակ Հայաստանի 17 առաջատար առցանց ԶԼՄ-ների ներկայացուցիչներն ու ոլորտի փորձագետները քննարկեցին առցանց ԶԼՄ-ների ինքնակարգավորման մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները: Մասնակիցները խոսեցին իրավական դաշտի, հեղինակային իրավունքի պաշտպանության, առցանց զրպարտության և առցանց ԶԼՄ-ների էթիկայի մասին:

Պայքար անդրազգային սպառնալիքների և ահաբեկչության դեմ

ԵԱՀԿ-ի կողմից մայիսի 22-23-ին կազմակերպված երկօրյա սեմինարի ժամանակ Հայաստանի պետական կառույցների ներկայացուցիչներին ներկայացվեց Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ՔԱՄԿ) Բաց բանալիների տեղեկատուն (ԲԲՏ): ԲԲՏ բազմակողմանի փոխանակման գործիք է, որով ստուգվում է կենսաչափական անձնագրերում պահպանվող էլեկտրոնային անվտանգության բնութագրիչների իսկությունը: Նախքան այս սեմինարը գրասենյակը մի քանի հանդիպումներ էր ունեցել Հայաստանի առանցքային կառույցների հետ՝ խրախուսելու համար Հայաստանի անդամակցությունը ՔԱՄԿ ԲԲՏ-ին էլեկտրոնային անձնագրերի ներդրման համապարփակ փորձի շրջանակում: Աշխատաժողովի մասնակիցները քննարկեցին ահաբեկչիների և այլ հանցավոր տարրերի կողմից կեղծ ճամփորդական փաստաթղթերով սահմանի հատումը կանխարգելելու ձևերը:

Դասընթաց ազգային փոքրամասնությունների համար

Մայիսի 31-ին մեկնարկեց գրասենյակի և Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի կողմից իրագործված կազմակերպական զարգացման հնգօրյա դասընթացը Հայաստանի ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների համար: Ազգային փոքրամասնությունների ինը համայնքների համար անցկացվեց կազմակերպական զարգացման դասընթաց, որն ուղղված էր խթանելու էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնության պահպանումն ու զարգացումը:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մարդու իրավունքների կրթություն

Ապրիլին ԵԱՀԿ գրասենյակի և «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնի-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպված եռօրյա դասընթացի ընթացքում Հայաստանի ուսուցիչ-վերապատրաստողները քննարկեցին աշակերտների առօրյային առնչվող մարդու իրավունքների կրթական ծրագրեր կազմակերպելու ուղիները:

Հայաստանի տարբեր մարզերի հիմնական և ավագ դպրոցների «Հասարակագիտություն» առարկայի մոտ 35 ուսուցիչ-վերապատրաստողներ և Կրթության ազգային ինստիտուտի մասնագետներ քննարկեցին դպրոցներում մարդու իրավունքների կրթության պլանավորման, իրականացման և գնահատման հետ կապված մարտահրավերներն ու խնդիրները: ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրված Հուշագրի շրջանակում գրասենյակը հունիսի 15-16 կազմակերպեց նաև աշխատաժողով՝ աջակցելու ավագ դպրոցում «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչները վերանայելուն:

2013թ.-ին գրասենյակը պատրաստել է զինված ուժերում մարդու իրավունքների դասավանդման ձեռնարկ, որը հիմք հանդիսացավ ՀՀ պաշտպանության նախարարության սերտ համագործակցությամբ՝ ՀՀ զինված ուժերի թիրախային խմբերում մարդու իրավունքների ուսուցման ծրագրի մշակման և իրականացման համար:

Ոստիկանության կրթություն

Ապրիլ-մայիս ամիսներին Միացյալ Թագավորությունից ոստիկանականության հարցերով միջազգային փորձագետն անցկացրեց մի շարք դասընթացներ Հայաստանի ոստիկանության կրթահամալիրի աշխատակիցների համար:

Դասընթացի նպատակն էր բարելավել կրթության որակը և ամրապնդել ուսումնական գործընթացի գնահատողների կարողությունները: Դասընթացներից մեկը վերաբերում էր ոստիկանական կրթության և ուսուցման տեսությանը և ժամանակակից մոտեցումներին, ուսումնառության փուլերին, ուսումնառության համար ապահով միջավայրին, հաղորդակցության հմտություններին և արդյունավետ փոխադարձ կապին: Մեկ այլ դասընթացում ներկայացվեցին գնահատման սկզբունքները և կիրառությունը, իսկ վերջին դասընթացը նվիրված էր ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման շրջանակներում որակի ապահովմանը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Քրեական արդարադատության բարեփոխում

Մարտի 19-ին գրասենյակի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից կազմակերպված աշխատաժողովը նվիրված էր Հայաստանի քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման շրջանակներում պաշտպանական կողմի իրավունքներն ամրապնդող նոր դրույթներին: Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը մշակող կառավարական հանձնաժողովը և աշխատանքային խումբը քննարկեցին ապացուցողական չափանիշների և ապացույցների ներկայացման նոր կանոնները: ԺՀՄԻԳ-ի փորձագետները ներկայացրեցին միջազգային չափանիշները և ԵԱՀԿ տարածաշրջանում առկա ընդհանուր իրավունքի ու քաղաքացիական իրավունքի համակարգերի օրենսդրությունները: Աշխատաժողովի ընթացքում մշակված մի շարք առաջարկություններ ծառայեցին որպես հիմք՝ ապացուցողական կանոնների մասով քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հետագա վերանայման համար: ՀՀ արդարադատության նախարարության խնդրանքով ԺՀՄԻԳ-ը մայիսին տրամադրեց իրավական կարծիք նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ:

ԺՀՄԻԳ-ի համագործակցությամբ, գրասենյակը կազմակերպեց նաև աշխատաժողով նվիրված դատավորների անկախությանը, հաշվետվողականությանը և արհեստավարժությանը՝ կառավարության 2012-2016թթ. իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագրի շրջանակներում: Մասնակիցները փոխանակեցին կարծիքներ և առաջարկեցին իրենց մոտեցումները դատական վարչարարության մարմինների և դատարանների նախագահների, դատավորների արդյունավետության գնահատման չափանիշները և ընթացակարգերը փոխելու և արդարադատության նոր ակադեմիա ստեղծելու մասին:

Վճռաբեկ դատարանի տարեկան հաշվետվություն

ԵԱՀԿ աջակցությամբ պատրաստվեց և հրատարակվեց Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2012թ. գործունեության վերաբերյալ ձեռնարկը: Վերջինս ներկայացնում է համապարփակ տեղեկություններ պալատի աշխատանքների վերաբերյալ, ներառյալ վիճակագրական տվյալներ, դատական որոշումներ և դատական նախադեպեր:

Հակակոռուպցիոն սոցիալական գովազդ

Գրասենյակը՝ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում թափանցիկության և ամբողջականության խթանման իր ծրագրի շրջանակներում թողարկեց հանրային սոցիալական գովազդ՝ բարձրագույն կրթության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի մասին: Տեսագրությունը մատչելի է ԵԱՀԿ կայքէջում:

Լուսանկարների ցուցահանդես նվիրված մամուլի ազատությանը

Մայիսի 3-ին ԵԱՀԿ գրասենյակը՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, ԵՄ պատվիրակության և ԱՄՆ ՄԶԳ-ի հետ համատեղ կազմակերպեց «Մամուլի ազատություն. տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով ցուցահանդես՝ մամուլի ազատության համաշխարհային օրը նշելու համար: Ցուցահանդեսում ցուցադրված էին լուսանկարներ և ծաղրանկարներ, որոնց միջոցով լուսանկարիչները բարձրաձայնել էին իրենց բողոքը ընդդեմ մամուլի ազատության խախտումների և հայտարարել տեղեկատվության մատչելիության իրենց իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանների մեծարում

Քաղաքացիական հասարակության ակտիվիստները, պետական պաշտոնյաները, մամուլի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պարգևատրվեցին Հայաստանում մարդու իրավունքները խթանելու հարցում իրենց մասնակցության համար: Հունիսի 13-ին հատուկ արարողության ժամանակ ԵԱՀԿ գրասենյակը, ԱՄՆ դեսպանատունը, ԵՄ պատվիրակությունը, Մեծ Բրիտանիայի դեսպանատունը, Եվրոպայի խորհուրդը և «Քաուսթերփարթ ինթերնեյշնլ»-ը պարգևներ հանձնեցին Նաիրա Առաքելյանին (Արմավիրի զարգացման կենտրոն), Լևոն Բարսեղյանին (Ասպարեզ ակումբ), Ալավերդու քաղաքապետ Արտավազդ Վարոսյանին, Սիվիլնեթ հեռուստաընկերությանը և «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ին: ԵԱՀԿ գրասենյակը Նաիրա Առաքելյանին հանձնեց «Խիզախ կին» մրցանակը:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն իր 57 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին՝ օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև ստանձնած իր պարտավորությունների կատարմանը անվտանգության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքներ:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ.. (00 374 10) 229610/11/12
էլ.փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ http://www.osce.org/yerevan